ԹԱԳՈՒՀԻ ԿՈԹՈԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկացած հասարակարգում հանրային արտադրության արդյունավետության բարձրացման նպատակն է աշխատանքային, նյութական ու ֆինանսական միջոցների միավոր ծախսերի դիմաց առավելագույն արդյունքի ստացումը: Գյուղատնտեսության մեջ, ինչպես և նյութական բարիքների արտադրության մյուս ոլորտներում, արտադրության արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն ունի արտադրական ծախքերի խնայողությունը և դրանց կրճատումը արտադրանքի միավորի հաշվով, որն իր արտացոլումն է գտնում արտադրանքի ինքնարժեքի մեջ:

Գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքը յուրաքանչյուր տնտեսության կարևորագույն ցուցանիշներից մեկն է: Վերջին հաշվով ինքնարժեքի մեջ են ընդհանրացվում ձեռնարկության աշխատանքային, նյութական ու ֆինանսական ծախսերը: Գյուղատնտեսական ապրանքների իրացման ներկայիս տարերային բնույթից է կախված ինչպես ինքնարժեքի մակարդակը, այնպես էլ զուտ եկամտի (շահույթի) ծավալը, շահութաբերությունը, ընդլայնված վերարտադրություն կիրառելու հնարավորություններ. պետ. բյուջեին կատարվող մուծումներ և այլն:

Գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի մակարդակի վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Դրանց շարքին կարելի է դասել նախացանքային աշխատանքների կատարումից մինչև բերքահավաքը և իրացումը, այսինքն պարարտացումը, մեքենայացումը, ոռոգումը, թունաքիմիկատներով բույսերի վնասազերծումը և այլն: Շատ կարևոր է ճիշտ ցանքաշրջանառության կիրառումը, որոնք վերջին հաշվով բարձրացնում են մշակաբույսերի բերքատվությունը՝ նպաստելով ինքնարժեքի իջեցմանը: Մի խոսքով երկրագործության վարման համակարգի կազմակերպումը: Հակիրճ անդրադառնանք դրանցից մի քանիսին՝

1. Վարելահողերի բերրիության և մշակվող մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում կարևոր նշանակություն ունի ցանքաշրջանառությունը:

Ցանքաշրջանառություններում մշակաբույսերի գիտականորեն հիմնավորված հաջորդականությունը նպատակամղված է հողի ագրոֆիզիկական և ֆիզիկամեխանիկական հատկությունների բարելավմանը, ջրային և քամու էրոզիայից հողի պաշտպանությանը, հողի սննդատարրերի մոբիլիզացիային և նրանց արդյունավետ օգտագործմանը, վնասատուների, հիվանդությունների և մոլախոտային բուսականության դեմ պայքարի կազմակերպմանը:

Զբաղված ցելերով ութդաշտյա ցանքաշրջանառության մեկ ռոտացիայի ընթացքում հողի վարելաշերտերում մոլախոտերի սերմերի քանակը կրճատվում է 40-45 տոկոսով: Նշված գործոնները մշակաբույսերի արդյունավետ հաջորդականության հետ համատեղ նպաստում են բերքատվության և ստացվող բերքի որակի զգալի բարձրացմանը:

Բազմամյա խոտաբույսերը (առվույտ, կորնգան, երեքնուկ) նպաստում են հողերում օրգանական նյութերի կուտակմանը, ազոտով և բույսերի համար սննդարար այլ տարրերով հարստացմանը ուստի և բերքատվության բարձրացմանը: Դրանք լավագույն նախորդ են հանդիսանում բանջարաբոստանային մշակաբույսերի հացահատիկի շարահերկ մշակաբույսերի համար: Լավ արդյունք է տալիս այդ մշակաբույսերի մշակումը սև ցելերից հետո:

Կարտոֆիլի լավագույն նախորդներն են հանդիսանում բազմամյա խոտերը, աշնանացան հացահատիկները, ոլոռը և բանջար-բոստանային մշակաբույսերը:

Շաքարի ճակնդեղի լավագույն նախորդներն են հանդիսանում բազմամյա խոտերի շրջված ճմուտը, հատիկընդեղեն և շարահեկ կուլտուրաները:

Ծխախոտի բարձր և որակով բերք է ստացվում, երբ այն մշակվում է բազմամյա խոտերի շրջված ճմուտի վրա, ինչպես նաև հատիկընդեղեն կուլտուրաներից, եգիպտացորենից և աշնանացան ցորենից հետո, ապահովելով դրանք ոռոգման ջրով:

Ցանքաշրջանառությունների ներդրման ժամանակ անհրաժեշտ է հնարավորության սահմաններում իրացնել և գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավել նոր և մասնավորապես կիսանապատային հողեր ապահովելով դրանք ոռոգման ջրով:

2. **Պարարտացումը** պարարտանյութերի կիրառության գիտականորեն հիմնավորված համակարգը դա օրգանական և հանքային պարարտանյութերի շահավետ եղանակով հող մտցնելու այնպիսի համալիր է, որը հնարավորություն է տալիս լավագույն ռեժիմով օգտագործել դրանցում պարունակվող սննդատարրերը, կանխել կորուստները, բնական միջավայրի աղտոտումը, յուրաքանչյուր կոնկրետ հողակլիմայական գոտում գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների բարձր ու լավորակ բերքի ստացումը և հողի բերրիության բարձրացումը:

Գյուղատնտեսական կուլտուրաները պարարտանյութերի նկատմամբ տարբեր պահանջ ունեն և տարբեր ժամանակներում են պարարտացվում: Այդ առումով էլ հանքային և օրգանական պարարտանյութերի քանակությունը հեկտարի հաշվով տարբեր կուլտուրաների համար տարբեր է:

3. **Ոռոգում.** գյուղատնտեսության զարգացման հիմնական լծակներից մեկը ոռոգումն է, որը ապահովում է մշակութաբույսերի բարձր և կայուն բերքի ստացումը:

Ոռոգումը հանրապետությունում կատարվում է նաև նախալեռնային և լեռնային բարդ ռելիեֆի, տեղանքի թեք պայմաններում: Ռելիեֆի բարդ պայմանները թելադրել են առանձին ոչ պակաս բարդ ոռոգման տեղամասերի առաջացմանը: Նախալեռնային և լեռնային շրջանների նոր իրացվող հողերը հիմնականում ուժեղ քարքարոտ և էրոզացված են, որոնք պահանջում են կուլտուր-տեխնիկական զգալի աշխատանքներ, այն է՝ հողերի խոր փխրեցում, քարերի հեռացում դաշտից և առաջացած փոսերի հարթեցում, ինչպես նաև ոռոգվող տեղամասերի արմատական հարթեցում: Ջրման եղանակները ըստ կուլտուրաների տարբեր են՝ շարահերկ կուլտուրաները ջրվում են ակոսներով, հացահատիկային կուլտուրաները և ցանովի խոտերը համատարած կամ արհեստական անձրևացման կարգով:

Ոռոգման եղանակների արդյունավետության աստիճանը պայմանավորված է նրանց ազդեցությամբ հողերի բերիության և ջրաֆիզիկական հատկությունների վրա, ինչպես նաև գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և ոռոգման ջրի արդյունավետ օգտագործման վրա: Ելնելով դրանից ոռոգման եղանակը ընտրելիս յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է ելնել գոյություն ունեցող հանրահայտ փաստից, որ ցանքաշրջանառության մեջ գտնվող բոլոր կուլտուրաների համար ամենատարածված և արդյունավետ ջրման եղանակը ակոսային, այնուհետև ըստ արդյունավետության նվազման կարգի՝ անձրևացումով ջրումը, մարգերով և մնացած ջրման եղանակները:

4. Մեքենայացման աշխատանքների կազմակերպում. երկրագործության արտադրական գործընթացների մեքենայացման և էլեկտրիֆիկացման տեսակետից հանրապետության գոտիականությունը պետք է որոշել հաշվի առնելով տեխնոլոգիական տվյալ գործողության համար նախատեսված մեքենատրակտորային ագրեգատի աշխատանքը բնորոշող գործոնները: Դրանցից կարևորներն են՝ կլիմայական պայմանները, տեղանքի ռելիեֆը, հողի տեսակը, դաշտերի ու հողակտորների չափերը, գյուղատնտեսական կուլտուրաների տեսականին և այլն:

Հանրապետության տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 400-4095 մետր բարձրության վրա, որը նվազեցնում է տրակտորային շարժիչի արդյունավետ հզորությունը 5-30 տոկոսի սահմաններում: Այսպես, հանրապետության հարթավայրային գոտում (ծովի մակերևույթից 400-900 մետր բարձրության վրա) շարժիչի հզորության կորուստը տատանվում է 5-10 տոկոս: Նախալեռնային գոտում՝ (մինչև 1400 մետր բարձրության վրա) մոտավորապես՝ 18 տոկոս, լեռնային գոտում՝ (մինչև 2000 մետր բարձրության վրա) 21 տոկոս, բարձրադիր գոտում՝ (2000 մետր և ավելի բարձրության վրա) 25 տոկոսի սահմաններում: Աշխատանքների մեքենայացման արդյունավետության վրա ազդող գործոններից են նաև տեղանքի թեքությունը, քարքարոտությունը և այլն:

Կատարված ագրարային բարեփոխումներից հետո քայքայվեց այդ ոլորտում կուտակված նյութատեխնիկական բազան, շարքից դուրս եկան առանց այն էլ ֆիզիկապես և բարոյապես մաշված հիմնական ֆոնդերի մեծ մասը, գյուղացուն թողնելով առանց տեխնիկայի, պարարտանյութերի և խոսք անգամ չէր կարող լինել երկրագործության մեջ գիտականորեն հիմնավորված համակարգերի կիրառման մասին: Միայն վերջին մի քանի տարիներին որոշ քանակությամբ տեխնիկա և պարարտանյութեր են ներմուծվում տարբեր երկրներից, որը կազմում է ընդհանուր պահանջի ոչ ավելի քան 5-10 տոկոսը:

Երկրում կատարված ագրարային ռեֆորմը մասնավորապես հողային ռեֆորմը արմատապես փոխեց հողային հարաբերությունները: Շարունակվում է հողերի բաշխումը և վերաբաշխումը հողի սեփականատերերի և հողօգտագործողների միջև: Տարբեր գործարքների օգնությամբ ստեղծվում են արտադրության նոր ձևեր և օպտիմալ չափեր:

Հողի արդյունավետ օգտագործումը առաջնահերթ խնդիր է նույնիսկ զարգացած երկրներում, իսկ մեր հանրապետության սակավահողության պայմաններում այն դառնում է օրվա խնդիր: Հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական օգտագործման հողերը կազմում են 0.4 հեկտար, իսկ վարելահողերը՝ 0.10-0.12 հեկտար: Հողային նման աղքատիկ ռեսուրս ունեցող երկրում գյուղատնտեսական արտադրական նպատակներով օգտագործվող հողի առավել ևս վարելահողի պահպանումը դառնում է երկրի ու ժողովրդի գոյության պայմանը: Սակայն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ագրարային բարեփոխումներից հետո հանրապետությունում կտրուկ կերպով վատթարացել է գյուղատնտեսական հողային ֆոնդի օգտագործման վիճակը՝ մեկ երրորդով կրճատվել են ցանքատարածությունները, ընկել է մշակաբույսերի բերքատվությունը, 2-3 անգամով կրճատվել է բազմամյա տնկարկների տարածությունները, ընկել է խոտհարքների օգտագործման արդյունավետությունը:

Աշխատանքի կատարման նպատակով ուսումնասիրվել են 1990-2006 թվականների ցանքատարածությունների կառուցվածքը, դրանց շարժը, բերքատվության մակարդակը, որը կազմված է վիճակագրական ծառայության ամենամյա հաշվետվությունների նյութերով (աղյուսակ 1.):

Աշխատանքի պահանջներից ելնելով, ուսումնասիրվել են բոլոր 10 մարզերի համապատասխան ցուցանիշները, սակայն նպատակահարմարության համար աղյուսակում բերված ցուցանիշները հանրապետության կտրվածքով են, որտեղ ընդգրկված են գրեթե բոլոր հիմնական մշակաբույսերը վերջին 16 տարիների համեմատությամբ: Աղյուսակ 1-ի տվյալները մեկնաբանությունների հարուստ նյութեր են տալիս: Սակայն հարկ ենք համարում սահմանափակվել հետևյալ ընդհանուր միտումների ընդգծումով:

1. Ուսումնասիրվող տարիներին մշակաբույսերի ընդհանուր ցանքատարածությունը հանրապետությունում 1990թ-ի համեմատությամբ կրճատվել է շուրջ 162.4 հազար հեկտարով (կամ 36.3 տոկոսով): Այդ գործընթացը առավել կտրուկ տեղի է ունեցել Վայոց Ձորի մարզում 4.1 անգամ: Նույնանման վիճակ է նաև Կոտայքի մարզում: Բացառություն են կազմում Արարատյան հարթավայրի մարզերը (Արարատ, Արմավիր), որտեղ ցանքատարածությունների որոշ ընդլայնումը տեղի է ունեցել խաղողի և պտղատու այգիների կտրուկ կրճատման հաշվին:

Աղյուսակ 1.

Ցանքատարածությունների, բազմամյա տնկարկների բերքատվության և դրանց շարժը ՀՀ-ում

Մշակաբույսերը	Ցանքատարած. հազ. հեկ.						Բերքատվությունը գ/հա					
	1990թ.	1995-2000թթ. միջին	2001-2005թթ. միջին	2006թ.	2006թ. % 1990թ. նկ.	2006թ. % 2001-2005 թթ. նկ.	1990թ.	1995-2000թթ. միջին	2001-2005թթ. միջին	2006թ.	2006թ. % 1990թ. նկ.	2006թ. 1995-2000թթ. նկ.
ընդ. հացահատիկ	138.2	173.4	198.8	159.5	115.4	80.2	19.6	16.4	19.9	13.3	67.9	66.8
որից՝ ցորեն	74.1	100.2	122.1	100.2	135.2	82.1	22.5	18.4	21.0	14.6	64.9	69.5
ծխախոտ	0.75	0.44	0.63	0.1	13.3	15.9	22.4	23.0	26.9	21.4	95.5	79.6
կարտոֆիլ	22.4	32.2	32.9	33.0	147.3	100.3	94.8	131.5	140.5	163.4	172.4	116.3
ընդ. բանջար.	18.0	21.0	21.5	24.3	135.0	113.0	216.4	209.0	250.8	309.8	143.2	123.5
որից՝ լոլիկ	6.0	5.8	6.2	7.2	120.0	116.2	250.5	261.2	327.3	441.1	176.1	134.8
բոստանային	4.8	3.8	3.8	4.0	83.3	105.3	65.2	188.0	251.9	335.2	514.1	133.1
ընդ. կերային	262.9	82.0	51.1	63.7	24.2	124.7	41.2	43.3	52.1	47.9	116.3	91.9
ընդ. պտուղ	50.2	28.0	24.4	30.2	60.2	123.7	42.6	41.8	55.2	93.9	220.4	170.1
որից՝ հնդավ.	12.0	11.7	11.3	30.2	251.6	267.3	48.5	40.2	64.8	103.0	212.4	159.0
կորիզով	9.5	9.5	11.3	11.6	122.1	102.7	40.6	39.9	51.2	95.8	236.0	187.1
խաղող	29.2	19.1	13.0	15.6	53.4	120.0	57.8	69.8	92.6	141.2	244.3	152.5
ընդ. ցանք.	447.0	312.8	308.8	284.7	63.7	92.2	×	×	×	×	×	×

Ծանոթություն՝ ընդհանուր ցանքային տարածություններում վերացված է բերքը հավաքված տարածությունները:

2. Ցանքատարածությունների ընդհանուր կրճատման պարագայում ավելացել են հացահատիկի (շուրջ 16%-ով), կարտոֆիլի (47%-ով) և բանջարային մշակաբույսերի (35%-ով) տարածությունները:

Ցանքատարածությունների կրճատումը և պարենային մշակաբույսերի ավելացումները տեղի են ունեցել կերային կուլտուրաների կտրուկ՝ 199.0 հազ. հեկտարով կամ 4.1 անգամ կրճատելու, ինչպես նաև նախկինում զարգացած այգեգործական տարածաշրջաններում այգիների որոշակի քանդման հաշվին:

3. Վերը նշված միտումները ընդհանուր առմամբ, որոշ բացառություններով ու առանձնահատկություններով վերաբերվում են գրեթե բոլոր մարզերին: Այսպես, հացահատիկային մշակաբույսերի ընդլայնումը տեղի է ունեցել բոլոր մարզերում, բացառությամբ Վայոց Ձորի մարզի՝ որտեղ այն կրճատվել է (2.3 անգամով կամ 2050 հեկտարով): Կարտոֆիլի ցանքերն ավելացել են գրեթե բոլոր մարզերում բացառությամբ Արարատի և Լոռվա մարզերի: Բանջարայինները ավելացել են բոլոր մարզերում, բացառությամբ Շիրակի մարզի: Կերային մշակաբույսերի տարածությունները կրճատվել են բոլոր մարզերում՝ 4.0-ից (Գեղարքունիքի մարզ) մինչև 14.4 (Վայոց Ձոր) անգամ:

Ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզերում ձևավորվել են ցանքատարածությունների նոր կառուցվածք, որը էապես տարբերվում է մինչ բարեփոխումները եղած և ըստ մասնագիտացման կայուն վիճակում եղած ցանքատարածությունների կառուցվածքից:

Աղյուսակ 2

Ցանքատարածությունների կառուցվածքը

Մշակաբույսերի	1990թ.	1995-2000թթ.	2001.-2005թթ.	2006թ.	2006թ.-ը 1990թ-ի նկատմամբ
հացահատիկ	30.9	55.4	64.4	56.1	182.0
կարտոֆիլ	5.0	10.3	10.7	11.6	232.0
բանջարային	4.0	6.7	7.0	8.5	212.0
կերային	58.8	26.2	16.5	22.4	38.0
այլ	1.3	1.4	1.4	1.4	1.1
ընդամենը	100	100	100	100	-

Վերջին տարիներին ձևավորված ցանքատարածությունների նոր կառուցվածքը, որը երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, ունի միանգամայն բացասական բնութագիր: Պարենային մշակաբույսերի բացարձակ գերակշռությունը հնարավորություն չի ընձեռնում ոչ միայն հիմնավորված ցանքաշրջանառությունների, այլ անգամ պարզ պտղափոխության համար: Այս հանգամանքը հանքային պարարտանյութերի խիստ սահմանափակ օգտագործման պարագայում, հանգեցրել է վարելահողերի բերրիության և հետևապես մշակաբույսերի բերքատվության նկատելի անկմանը: Կերային կուլտուրաների և բազմամյա տնկարկների կրճատման հաշվին ավելացել են՝ հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի տարածքները:

Ցանքատարածությունների անբարենպաստ կառուցվածքին եթե ավելացնենք նաև վարելահողերի ծայրահեղ կտրտվածության գործոնը, ապա կարելի է եզրակացնել, որ ներկայումս երկրագործության արդյունավետության բարձրացման համար բացակայում են անհրաժեշտ պայմանները:

Հողօգտագործման արմատական բարելավումը նախ և առաջ պետք է իրականացնել արտադրության էական խոշորացման միջոցով: Դա տեղի կունենա, եթե ներկայիս ձևավորված փոքր տնտեսությունները միավորվեն, որի արդյունքում հողակտորները կխոշորացվեն, պահուստային հողերից տրվեն վարձակալության հիմունքներով, զարգանան կոոպերացիաները և այլն: Դրա համար անհրաժեշտ է երկարաժամկետ և լուրջ ներդրումներ և, որ կարևոր է, արտադրության խոշորացումը կատարվի հողօգտագործողների կամավոր ցանկության դեպքում:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ ասպիրանտ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

1995 թ.-ի հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կարևորագույն և սկզբունքային կետերից մեկն այն էր, որ մայրաքաղաքին՝ Երևան քաղաքին, տրվեց մարզի կարգավիճակ, ինչը ենթադրում էր, որ Երևանում պետք է իրականացվեր պետական կառավարում որոշակի առանձնահատկություններով հանդերձ: Որպես տեղական ինքնակառավարման միավորներ Սահմանադրությամբ ամրագրվեցին Երևանի թաղային համայնքները: Այս ամենից բացի սահմանվեց նաև Երևանի քաղաքապետի նշանակման և ազատման առանձնահատուկ կարգը, այն է՝ վարչապետի ներկայացմամբ Երևանի քաղաքապետին նշանակում և ազատում է ՀՀ Նախագահը /մարզպետերին նշանակում և ազատում է կառավարությունը/: Որպես Սահմանադրության պահանջի կատարում՝ մայրաքաղաքի մարզի կարգավիճակը հաստատվեց նաև նույն թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը բաժանվեց 10 մարզերի, դրանց տարածքում գտնվող քաղաքային և գյուղական համայնքերի, ինչպես նաև մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքի և վերջինիս տարածքում գտնվող 12 թաղային համայնքների: Ըստ նշված օրենքի՝ թաղային համայնքներ են կոչվում Երևան քաղաքի թաղամաս և բնակավայր ընդգրկող համայնքները: Թաղային համայնքների սահմանները որոշվում են նրանց մեջ ընդգրկված բնակավայրերի և թաղամասերի սահմաններով[1]: Այս բոլորը ամրագրվեց 1996թ.-ի հուլիսի 19-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքում[2]:

Նախկին Սահմանադրությամբ Երևան քաղաքին մարզի կարգավիճակ շնորհելու տրամաբանությունը հիմնավորվում էր այն փաստով, որ հանրապետության մայրաքաղաքում, որտեղ գործում են երկրի պետական իշխանության և կառավարման կենտրոնական մարմինները, արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունները, երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնները, կառավարումը չէր կարող հենց այնպես հանձնվել /համենայն դեպս՝ պետության ձևավորման այդ փուլում/ ֆինանսական անբավարար միջոցներ ունեցող ինքնակառավարման մարմիններին, և գործադիր իշխանությունը անպայմանորեն սեփական լծակներով պետք է կառավարեր երկրի համար այդքան մեծ նշանակություն ունեցող գլխավոր քաղաքը: Սակայն, հետագայում քաղաքական զարգացումները և մայրաքաղաքի դերի վերագիտակցումը բերեցին այն բանին, որ արդեն 2005թ.-ի նոյեմբերի 27-ին ընդունված նոր Սահմանադրությամբ Երևանը հռչակվեց համայնք: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունն արդեն Եվրախորհրդի անդամ երկիր էր, և, անդամակցելով այդ կառույցին և մասնավորապես՝ վավերացնելով տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիան, խնդիր առաջացավ մայրաքաղաքում ևս ներդնել ժողովրդավարության և իշխանության ապակենտրոնացման սկզբունքների վրա հիմնված տեղական ինքնակառավարման համակարգը: Բացի այդ, ընդհանուր տարամաբանությունն էլ թելադրում էր, որ Երևանը՝ որպես քաղաք, իրենից ներկայացնելով մեկ միասնական օրգանիզմ, ունենալով միասնական տարածք, թաղային համայնքերի խնդիրների ընդհանրություն, պետք է ունենար այդ ընդհանուր խնդիրները լուծող ժողովրդի կողմից ընտրված համապատասխան մարմիններ՝ միևնույն ժամանակ ունենալով նաև սեփական բյուջե և դրա շրջանակներում համաքաղաքային խնդիրները լուծելու իրավունք և կարողություն: Սահմանադրական այս փոփոխությունը, ինչ խոսք, վկայում է այն մասին, որ առաջիկա տարիների ընթացքում Երևան քաղաքը, լինելով համայնք, պետք է անցնի տեղական ինքնակառավարման համակարգի: Ընդ որում՝ բարեփոխված Սահմանադրության անցումային դրույթներում հստակորեն նշվել է, որ Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում պետք է համապատասխանեցնի գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է կազմավորվեն համապատասխան օրենքի ընդունումից ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում: Այսինքն՝ Երևան քաղաքում տեղական ինքնակառավար-

---

[1] Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «Հայաստանի Հանրապետության օրենքների ժողովածու /1995-1999թթ./», Գիրք-Ա, Երևան, 1999թ., հոդված 5:

[2] «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, 1996թ., թիվ 13-14, էջեր 6-7: